



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2011

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորիել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 4

ԱՂՈԹՔ ՕԳՆՈՒԹԵԱՆ

Քեզ կը կանչեն, պատասխան տուր, ո՛վ Աստուած,
դուն ես արդարութիւնս պաշտպանողը.
մեղութեանս մէջ դուն զիս հանգստացուցիր.
ողորմէ ինձի, լսէ՛ աղօթքս:
Ո՛վ մարդիկ, մի՛նչեւ ե՞րբ զիս պիտի անարգէք.
ինչո՞ւ դատարկաբանութիւնը կը սիրէք եւ ստութեամբ կը զբաղիք:
Գիտցէք, թէ Տէրը բացառիկ վերաբերում ցոյց տուաւ ինձի,
որ հաւատարիմ եղայ իրեն,
եւ պիտի լսէ զիս, երբ օգնութեան կանչեն զինք:
Աստուծմէ վախցէք եւ մի՛ մեղանչէք.
ինչ իր ձեր սրտին մէջ կը խորհիք՝ ձեր անկողիններուն մէջ զոջացէք:
Ձեր մեղքերէն արդարանալու համար՝ զոհեր մատուցանեցէք,
եւ Տիրոջ վստահեցէք:
Խաղաղութեամբ կը պառկիմ ու կը քնանամ,
որովհետեւ Տէր, միայն դուն ապահովութիւն կու տաս ինձի:

ՇԱՐՍԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխատհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

Ամենակալ Աստուած,
ամենուն բարերար ստեղծող,
լսէ՛ վշտալի ձայնիս հառաչանքներուն,
եւ ապագայ կասկածներու տագնապալից
երկիւղէն փրկէ՛ զիս,
Քու մեծ գորութեամբդ ազատելով զիս մեղքերէս:
Որովհետեւ Դուն կարող ես ամէն բանի,
ամէն միջոցներու համար գորաւոր ըլլալով
Քու անբաւ մեծութեամբդ եւ անսահմանելի իմաստութեամբդ:
Ամէն:

Նարեկացի Բան Խ

Յիսուս եւ Բեղզերուդ (12:22-32)

Հպարտութիւն
Նախանձ
Բարկութիւն
Արեւութիւն
Սպաննութիւն

1. Ընդհանրապէս սպաննութիւնները յաղթանակ կը նկատուին, սակայն խորքին մէջ, միւս կողմին անկման ու քայքայման սկիզբն է:
2. Անոր բժշկութիւնը Աստուծոյ գութին ու ողորմութեան մէկ արտայայտութիւնն է:
3. Դիւահարին բժշկութիւնը նշան մըն է, թէ Քրիստոս եկած է կործանելու Չարին բոլոր գործերը:
4. Հետեւաբար երկու համագոր ոյժեր չկան, այլ միակ՝ Աստուած Ինք:
5. Դիւահար, կոյր ու համր: Դեւը ոչ միայն կապանքի փակ առած է մարդ արարածը, այլ նաեւ կոյր՝ հաւաքքի աչքերը փակած, որպէսզի չկարենայ տեսնել Աստուծոյ փառքն ու բարիքները, եւ համր՝ որպէսզի տեսնելէ ետք չկարենայ զԱստուած փառաւորել, վկայութիւնը տալ:
6. Այս բժշկութեան ի տես փարիսեցիները, ընդհակառակը, իրենց աչքերը կ'ուզեն փակել, որպէսզի չտեսնեն:
7. Ժողովուրդը հազիւ թէ տեսաւ ու լսեց պարահաճը, անմիջապէս, խանդավառ, կը հարցնէ. «Ասիկա՞ է Քրիստոսը, Դաւիթի Որդին»: Փարիսեցիները կը միջամտեն եւ հաւաքքի թափը կը կտրեն:
8. Փոխանակ պարահաճը տեսնելու որպէս արտայայտութիւն աստուածային գութին ու ողորմութեան, փարիսեցիները զայն կը վերագրեն Սաքանայի զօրութեան:
9. Փարիսեցիները ոչ միայն կը մերժեն Քրիստոսը, այլ՝ կը մերժեն Աստուծոյ թագաւորութիւնը, նաեւ կ'արգիլեն ու կը փակեն մութքը անոնց որոնք կը փափաքին ներս մտնել:
10. Ներքին պառակտումները շար աւելի վրանգաւոր են, քան արտաքին:
11. Նշանները կարդալու եւ հասկնալու կարողութիւնը ունենալ:
12. Երբ Աստուծոյ կամքին համաձայն չենք գործեր, ուրեշն Չարին կամքն է որ կը կատարենք:
13. Բաւարար չէ կրաւորական մնալ, այլ պէտք է գործել:
14. Աստուած պարբար է ամէն տեսակի մեղք ներելու, իր անսահման ողորմութեան արտայայտութիւնը: Բայց Ս. Հոգիին դէմ եղած հայհոյութիւնը ո՛չ: Ս. Հոգիին դէմ հայհոյութիւն կը նշանակէ մերժել Քրիստոսը, Ս. Հոգին, այլ խօսքով աստուածութիւնը, ու անոր կատարած փրկագործութիւնը:

Ծառը եւ իր պտուղը (12:33-37)

1. Մարդուս կեանքն ալ կը նմանի ծառի եւ անոր փուռ պտուղին:
2. Փարիսեցիներուն պտուղը նման էր Չարին պտուղին:
3. Սրբին մէջ եղածը մարդուս մտքի խորհուրդներն են:
4. Քրիստոս կը ճանչնայ մարդուս խորհուրդները: Հետեւաբար ըստ այնմ զգուշ ըլլանք մեր արտայայտութիւններն ու մեր խորհուրդներուն վերաբերեալ:
5. «Իմաստութիւն Հօր Յիսուս փուր ինձ իմաստութիւն զբարիս խորհիլ եւ խօսիլ եւ գործել»: